
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Մինչև 19-րդ դարի վերջ կլիմայի փոփոխությունների կանխատեսվող հետևանքները բնության և մարդկության համար, եթե մարդկությունը չանի առավելագույնը ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու ուղղությամբ



19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ երկրի միջին ջերմաստիճանը բարձրացել է 1,2°C-ով: Վերջին 1400 տարում երբեք ջերմաստիճանը չի եղել ավելի բարձր:
2024թ. դարձել է օդերևութաբանական դիտարկումների ամբողջ պատմության ընթացքում ամենատաք տարին:



Ջերմաստիճանի աճին զուգընթաց, բոլոր բնական համակարգերը շեղվում են հավասարակշռությունից. հալչում են սառցադաշտերը և բազմամյա սառցույցը, բարձրանում է Համաշխարհային օվկիանոսի մակարդակը, հաճախակիանում են ջրհեղեղները, երաշտները և փոթորիկները, եղանակն ավելի փոփոխական է դառնում:

2 մլրդ. մարդ
2050թ.

Կանխատեսվում է, որ կլիմայի փոփոխության հետևանքով Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացման, ջրհեղեղների և այլ բնական աղետների պատճառով մինչև 2050թ. տուժած մարդկանց թիվը կհասնի 2 միլիարդի:

Բնակչության 1/3

Աշխարհի բնակչության 1/3-ն ապրում է ափամերձ շրջանների 100 կիլոմետրանոց գոտում և առավել խոցելի է ջրային պաշարների փոփոխության նկատմամբ՝ ծովի մակարդակի բարձրացման պատճառով կկրճատվեն քաղցրահամ ջրի պաշարները և ափամերձ բնակավայրերը կհայտնվեն ջրի տակ:


1,8 մլրդ մարդ

Կլիմայի փոփոխության պատճառով կփոխվի նաև տեղումների քանակը և ռեժիմը: Կանխատեսվում է, որ 2080թ. 1,8մլրդ. մարդ կապրեն ջրի սակավության պայմաններում:

2°C = $ 100 մլրդ

Ընդամենը 2°C ջերմաստիճանի բարձրացման դեպքում հարմարվողականության միջոցառումների ծախսերը տարեկան կկազմեն 70-100 մլրդ դոլար:

Հանածո վառելիքի այրման և անտառահատումների պատճառով մթնոլորտում ջերմոցային գազերի խտությունը հասել է ռեկորդային բարձր ցուցանիշի վերջին առնվազն 800 000 տարվա ընթացքում: Արդյունաբերական զարգացման մեկնարկից (1750-ական թվականներ) հետո ածխաթթու գազի պարունակությունը մթնոլորտում բարձրացել է 40%-ով, մեթանինը՝ 120%-ով, իսկ ազոտի ենթօքսիդինը՝ 20%-ով:



Կլիմայական արկղիկ